

Մայիսի 16-ին տեղի ունեցավ Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի հերթական նիստը, որը վարեց հանձնաժողովի նախագահ Սիմոն Տեր-Սիմոնյանը:

Հանձնաժողովը քննարկեց 23 բարեգործական ծրագիր:

Մասնավորապես, քննարկվել և հաստատվել են՝

«Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող Վարդենիս-Մարտակերտ ավտոճանապարհի Սուք-Քարվաճառ խաչմերուկի 1-ին տեղամասի 13.65 կմ երկարությամբ հատվածի կառուցման 2-րդ փուլի տեխնիկական հսկողության, Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Արզնի գյուղի տարածքում «Ձատիկավան» ծրագրի շրջանակներում անասնագոմի վերակառուցման, Պ. Չայկովսկու անվան երաժշտական միջնակարգ մասնագիտական դպրոցի տեխնիկական վիճակի գննման և ուսումնասիրության և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Ստեփանակերտ քաղաքի Սայաթ-Նովայի անվան երաժշտական քոլեջի մեկ մասնաշենքի կահավորման օժանդակ ծրագրերը:

Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության «Երևանի պետական համալսարան» ՊՈԱԿ-ի կողմից իրականացվող՝ համալսարանի և ԱՄՆ-ի Գլենդել քաղաքի Հայկական բարեգործական ընդհանուր միության համագործակցության ծրագիրը:

Հայկական բարեգործական ընդհանուր միության Հայաստանի ներկայացուցչության կողմից իրականացվող «ՀԲԸՄ երիտասարդական կենտրոնի կահավորման ծրագիրը:

Հարավային Կովկասում անդրսահմանային միացյալ քարտուղարության և «Դիլիջան» Ազգային պարկ» ՊՈԱԿ-ի միջև կնքված դրամաշնորհի պայմանագրի շրջանակներում ֆինանսավորվող՝ 2014 թվականի ծրագիրը:

Հարավային Կովկասում անդրսահմանային միացյալ քարտուղարության և «Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի միջև կնքված դրամաշնորհի պայմանագրի շրջանակներում ֆինանսավորվող՝ 2014 թվականի ծրագիրը:

«Քրոնիմետ» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Երևանի թիվ 92 մանկապարտեզի մասնակի վերակառուցման և վերանորոգման ծրագիրը:

«Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող՝ Արագածոտնի մարզի համայնքներին կահույքի մատակարարման Սյունիքի մարզի երեք համայնքներում շինարարական վերանորոգման աշխատանքների իրականացման, Սյունիքի մարզի չորս համայնքներին շինարարական նյութերի մատակարարման, Տավուշի մարզի Դիտավան և Պառավաքար համայնքներում խաղողի այգիների վրա հակակարկտային ցանցերի տեղադրման, Գեղարքունիքի մարզի Վարդենիսի և Ճամբարակի տարածաշրջանների, Շիրակի մարզի Ամասիայի տարածաշրջանի և Տավուշի մարզի քսաներեք համայնքների դպրոցներին պրոեկտորների նվիրաբերության և Կիրակնօրյա դպրոցների երեխաների համար նախատեսված Աստվածաշնչի փաթեթների ձեռքբերման ծրագրերը:

«Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպության կողմից իրականացվող՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Քեթի համայնքի ներքին ջրային ցանցի վերակառուցման և Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Նորաշեն համայնքի անասունների խնոցների կառուցման ու ջրային ցանցի վերակառուցման ծրագրերը:

«Հայկական ակնաբուժության նախագիծ» բարեգործական հիմնադրամի կողմից 2014-2016 թվականների ընթացքում իրականացվող «Լույս՝ հայի աչքերին» (յոթերորդ փուլ) ծրագիրը:

«Երևան իմ սեր» հիմնադրամի կողմից իրականացվող «Էջմիածնում՝ Մայր Աթոռին կից մանկական այգու և կենտրոնի կառուցում» ծրագիրը:

Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության, Կովկասի բնության հիմնադրամի և «Արփա լիճ» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի միջև կնքված դրամաշնորհի պայմանագրի շրջանակներում ֆինանսավորվող՝ 2014 թվականի ծրագիրը:

Հայաստանի Հանրապետությունում առողջապահության նախարարության «ՁԻԱՀ-ի կանխարգելման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից իրականացվող «ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելում, բուժօգնություն, ՄԻԱՎ-ի վերաբերյալ խորհրդատվություն և ուսուցում» ենթադրամաշնորհային ծրագիրը.

«Վերջին օրերի սբերի բարեգործություններ» կորպորացիայի հայաստանյան ներկայացուցչության կողմից իրականացվող «Համայնքներին մաքուր խմելու ջրի ջրամատակարարում» ծրագիրը.

Նիստում քննարկվել և հաստատվել են նաև նախկինում հաստատված ծրագրերի շրջանակներում իրականացվող հարակից գործարքներ և տարբեր կազմակերպությունների հասցեներով ստացված բարեգործական բեռների ներմուծման ծրագրեր: